Արձանագրության 3
«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/132» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի
հանձնաժողովի նիստի

ք. Երևան 09.07.2018թ.
Ժամը՝ 14.00

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Կատվալյան /ԳԱՊ/

Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Ասատրյան, Մ. Թադևոսյան
Մ. Գրիգորյան, Ա. Մովսեսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Կիրակոսյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին

(Ս. Կատվալյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցներ՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցները հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունեն ժամկետանց հարկային պարտավորություն:

1.2 Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող ճանաչված մասնակցի կողմից էլեկտրոնային կայքի միջոցով հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել է գնման առարկայի իր կողմից առաջարկված տեխնիկական բնութագիրը, որը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է հրավերով սահմանված բնութագրին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. Գնանշման հարցման ընթացակարգի հայտի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ս. Կատվալյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցների հայտերի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
Արգավանդ Կահույք ՍՊԸ	Բավարար
Ֆոտոն ՍՊԸ	Բավարար
ԱՌԿՏՈՒՐ ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/132 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ս. Կատվալյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/132» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարել

-1-ին չափաբաժնի մասով «ԱՌԿՏՈՒՐ» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված մասնակից

-2-րդ, 3-րդ, 4-րդև 6-րդ չափաբաժինների մասով «Ֆոտոն» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված մասնակից

-5-րդ չափաբաժնի մասով «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված մասնակից և վերջիններիս ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ հինգ օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ս. Կատվալյան

Անդամներ՝ ---------- Ս. Ասատրյան

---------- Մ. Թադևոսյան

---------- Մ. Գրիգորյան

---------- Ա. Մովսեսյան

Քարտուղար՝ ---------- Ն. Կիրակոսյան